


ՀԱՄԱՅՆՔԻ ԱՌՕՐՅԱՆ

ՎԻՐՏՈՒԱԼ ԱՅՅԵԼՈՒԹՅՈՒՆ ՄԱՐՏԻՐՈՍ ՄԱՐՅԱՆԻ ՏՈՒՆ-ԹԱՆԳԱՐԱՆ



ԽՄՀՄ ժողովրդական նկարիչ, ԽՄՀՄ Գեղարվեստի ակադեմիայի իսկական անդամ, ՀԳԱԱ ակադեմիկոս. «Մարտի ինքը բնությունն է, բնությունը՝ մարդը: Մահն չկա»: Մահը պրոցես է լույս անվերջության ճանապարհին»:

Մարտիրոս Մարյանը (1880-1972 թթ.) ծնվել է Նոր Նախիջևանում: Մարյանի նախնիները եղել են անեցիներ և գաղթելով Կրիմ՝ մասնակցել են տեղի հայկական գաղթավայրի ձևավորմանը: 1895 թ. Մարյանն ավարտել է տեղի հանրակրթական ուսումնարանը, 1897-1904 թթ. սովորել է Մոսկվայի գեղանկարչության, քանդակագործության և ճարտարապետության ուսումնարանի գեղանկարչություն բաժնում: Առաջին անգամ Երևանում, Աշտարակում, Վաղարշապատում եղել է 1901թ., իսկ 1902թ.՝ Անիում: Ճամփորդության ընթացքում ուսումնասիրել է հայոց պատմությունը, մշակույթը, որը վճռական ազդեցություն է ունեցել նրա աշխարհայացքի և ստեղծագործական ներաշխարհի ձևավորման վրա: Մեծ եղեռնի ողբերգական օրերին նա անդամագրվեց հայերին օգնող մոսկովյան կոմիտեին և, Հովհ. Թումանյանի, Գ. Հովսեփյանի հետ միասին, անուրանալի ջանքեր գործադրեց Արևելյան Հայաստանում ապաստանած փախստականներին գործուն օժանդակություն ցուցաբերելու խնդրում:

1928 թ. Փարիզում բացվել է Մարյանի անհատական ցուցահանդեսը: 1923 թ. սկսած ստեղծել է հայրենասիրական ոգով տոգորված դիմանկարներ, բնանկարներ՝ «Հայաստան», «Լեռներ: Հայաստան», «Եղիշե Չարենց», «Թ. Թորամանյան», «Ս. Մալխասյան»: «Իմ հայրենիքը» նկարաշարի համար 1961 թ. Մարյանն արժանացել է Լենինյան մրցանակի: Հայաստանում սովետական կարգերի հաստատումից հետո Մարյանը 1921 թվականին ընտանիքով տեղափոխվել է մշտական բնակություն է հաստատել Երևանում, որտեղ էլ 1972 թվականի մայիսի 5-ին վախճանվել է: Թաղված է Երևանի Կոմիտասի անվան պանթեոնում: Մարյանի գործերը կենտրոնացված են նրա տուն-թանգարանում, Հայաստանի պետական պատկերասրահում և նրա մասնաճյուղերում, ինչպես նաև Տրեյտյակովյան պատկերասրահում, ԱՊՀ երկրների տարբեր թանգարաններում, ԱՄՆ-ի, Ֆրանսիայի և այլ երկրների մասնավոր հավաքածուներում:

Մարյանի մեծագույն սերը, մուսան ու կյանքի բնկերը Դազարոս Աղայանի դուստրն էր՝ Լուսին Աղայանը: Նրան են նվիրված մի շարք նկարներ ու դիմանկարներ:

Այստեղ է նաև Ավետիք Իսահակյանի բեղուն գրիչը: Գրողի մահից հետո Իսահակյաններն ընտանիքը այն նվիրել է Մարյանին:

Ակնածանրով ու հուզմունքով դիտեցիք տուն-թանգարանի սրբավայր՝ վարպետի արվեստանոցը: Այստեղ Մարյանի գունապնակն է, աշխատանքային սեղանը:

Մարյանը վրձիններ շատ է ունեցել: Ասում են՝ հատ-հատ կարող էր ճանաչել, ասել, որ այ սրանով նկարել եմ Հայաստանի գերբը, սրանով՝ Արամ Խաչատրյանին:



Մարյանների համար դժվարին շրջան էր Հայրենական պատերազմը: Պատերազմ մեկնած որդուն գրված նամակներն անպատասխան էին մնում: Նա կրկին դիմում է վրձնի օգնության ու հույզերը փոխանցում կտավին: Նկարում է իրեն ու կնոջը՝ առջևում որդու նկարը: Նկարի առաջին պլանում տեսնում ենք կնոջը՝ ձեռքին մի բան, որ փորձում է բացել, բայց արդեն հայելու մեջ տեսնում ենք նամակ: Վարպետն այստեղ փորձել է ասել, որ շատ կցանկանար կնոջ ձեռքում այս մրգի փոխարեն լինել այս նամակը՝ որդուց: Կինը բացել նամակը,



կարդային և իմանային, որ որդին ողջ է: Այնուամենայնիվ, Մարյանները ստանում են նամակ որդուց և այն, հատուկ ծրագրի միջոցով, բացվում է այցելուի առջև: Մրգերն ու բանջարեղենները կյանքի բարիքներ համարող վարպետն ինքն էր գնում շուկա և իր ձեռքով ընտրում դրանք: Որոնց հետո պիտի հավերժ կյանք

տար իր կտավներում: Մարյանի ամենահայտնի ստեղծագործություններից մեկը՝ «Հայաստան» պաննոն, նա նկարել է 84 տարեկանում: Ցանկանում էր ամբողջ Հայաստանը հավաքել մեկ կտավում: Նա կարծես պատկերել է ժամանակագրական 3 շրջան: Վաղ շրջանը, այն մեռածսի ճանապարհը, որ անցել է Հայաստանով, ուղտերի պատկերը դրանով ենք բացատրում: Պաննոնի ձախ մասում 20-ական թվականներն են, տափակ կտորներով շենքեր, իսկ կենտրոնում ապագա Երևանն է՝ իր շենքերով ու ավտոմեքենայով:



«Հեքիաթ». այսպես է կոչել իր վերջին նկարը լույսի ու սովերի, վառ ու արևոտ գույների վարպետը՝ մեզ գույների հեքիաթ նվիրած Մարտիրոս Մարյանը: Վիրտուալ այցելությունից հետո ուսանողներն ու աշակերտները ոգեշնչված Մարյանի գույներով, ստեղծագործություններով, նկարեցին նատյուրմորտներ: Ծնորհակալություն Հայկական վիրտուալ համալսարանին, հեռավար դասախոս Գոհար Գևորգյանին այսպիսի հնարավորություն ընձեռելու համար: Լիառույս ենք, որ նման միջոցառումները կլինեն շարունակական:

Պատրաստեց՝ Արմինե ՀՈՎՍԵԹՅԱՆԸ

ՎԿԱՅԱԿԱՆՆԵՐԻ ՀԱՆՁՆՈՒՄ ԸՂԸ-ՈՒՄ



2019 թ-ից Դոնի Ռոստովի հայ համայնքի ջանքերով Հարավային դաշնային համալսարանում (ՀԴՀ) գործում է Հայագիտության կենտրոնը: Կենտրոնը, բացի հայագիտության բնագավառում կատարած գիտական մեծ աշխատանքներից, նպաստել է նաև ՀԴՀ-ի Մոցոլովգայի և տարածաշրջանագիտության ինստիտուտում հայոց լեզվի՝ որպես առարկայի դասավանդմանը:

2021-2022 թթ. ուսումնական տարում Տարածաշրջանագիտության ֆակուլտետի մի խումբ ուսանողներ հնարավորություն ստացան կենտրոնում ուսումնասիրել հայոց լեզու, ծանոթանալ հայոց պատմությանն ու մշակույթին:

Կենտրոնի լսարանը կահավորված է նորագույն տեխնոլոգիաներով, մասնագիտական գրականությամբ, ինչն էլ հնարավորություն է տալիս ուսուցումն ավելի արդյունավետ դարձնելու համար:

Կենտրոնն ակտիվ համագործակցում է նաև ՀԲՀՄ հայկական վիրտուալ համալսարանի հետ (ՀԲՀՄ), որն օնլայն կրթության հավաքածուներով հաստատություն է և նորագույն տեխնոլոգիաների միջոցով տրամադրում է հայագիտական կրթություն ամբողջ աշխարհում:

ՀԲՀ-ի ժամանակակից կրթական նախագծերի և դասընթացների շնորհիվ կրթության հնարավորություն ունեն բոլորը՝ անկախ բնակության վայրից, ազգությունից ու գիտելիքների մակարդակից: Ստեղծված վիրտուալ դասարաններում ուսուցումն իրականացվում է հիբրիդ ծրագրով, որն ավանդական ու օնլայն մեթոդների խառնուրդ է:

Եվ ահա Տարածաշրջանագիտության ֆակուլտետի մի խումբ ուսանողներ, ովքեր ուսումնասիրում են հայերեն, ավարտեցին «Արևելահայերեն սկսնակների համար» կուրսը, ստացան ՀԲՀ-ի ավարտական վկայականներ:

ՀԲՀ-ի հեռավար դասախոս Գոհար Գևորգյանի, կրթական ծրագրերի համակարգողներ Արմինե Թավաքայանի, Մարինա Խաչատրյանի շնորհիվ կազմակերպվեց վկայականների օնլայն հանձնում: Ուսանողներին ցուցադրվեց նաև Հայաստանի պատմության և աշխարհահռչակ հայերի մասին պատմող տեսանկյունը:

Ննչեցին շնորհակալական խոսքեր: Ոգևորությամբ ու պատրաստակամությամբ ուսանողները կշարունակեն համագործակցությունը ՀԲՀ-ի հետ:

Շովինար ՍԱՐԳՍՅԱՆ, ՀԴՀ-ի դասախոս